

ԳՐԱԴԱՐԱԿ



ԱՌԻՆՔՆՈՂ ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՐ

«Լինենք ազնիվ ու բարի» չափածո ժողովածուն Աղասի Գետրոյանի ստեղծագործական առաջին գիրքն է, որը թերթելիս նկատվում է մի օրինաչափություն...

Անհրաժեշտություն, որին, գարնանալի անհավակնություններ, հավատարիմ է մնացել հեղինակը: «Իմ բանաստեղծությունները դոգմա չեն, այլ ցանկություն կիսվել ընթերցողի հետ մտքերով, դատողություններով, տեսակետներով»,- խոստովանում է Գետրոյանը...

վր էլ Սարինա Կիրակոսյան-Մոսեսովան: Ա.Գետրոյանի առաջնել գիրքը խմբագրել է երեսանցի, բայց ծնունդով Վրաստանի թերթի շրջանի Դաղեթ-Խաչենից, բանաստեղծ, բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Մաղալյանը: Դժվար է չհամաձայնել, այս դեպքում խմբագրի՝ առաջաբանի համար գտնված «Անակնկալ հայտնություն» վերտառությունը:

պատմություն», երբ հանդես եկավ բանաստեղծական ժողովածուով՝ իբրև հեղինակ-ստեղծագործող, հասկանալի դրական գարնանքով ընդունվեց: Ավելացնենք՝ եւ ի սրտե ողջունվեց ընթերցողից իր ինքնաբերական մղումներով: «Եիշտ է, Ա.Գետրոյանի ներկա ժողովածուն ունի որոշ աննշան թերություններ,- նշում է խմբագիր Սաղալյանը,- բայց գրել է բարի սրտի բխումով ու ազնիվ մղումով, կյանքի նկատմամբ ունեցած խոր հավատով ու լավ մպատակով, մարդկանց մոտ էլ շրջապատում միշտ լավ ու բարի տեսնելու ցանկությամբ»:

«ԴՐԻՔԻՆԳ». ՇԵՏԱՔՐԵՐԻ ԳԻՐՔ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ



«ՍԱՆԱՅՎ՝ ԳԵ՛ ՏՈ, ՄԱՐԴԱՆԻԱ»

Մարզասերների քաջածանոթ է հեռուստատեսության մարզական լրագրող, ֆուտբոլային մեկնաբան Դավիթ Քլիբաձեի անունը: Ժամանակին նա Վրաստանի կենտրոնական հեռուստատեսությամբ վարում էր «Մարզական կոլեյդոսկոպ», «45 րոպե», «Դրիբլինգ» հաղորդաշարերը: Նյութի փոխանցման նրա ձեռք լայն հասարակայնության շրջանում առանձնակի սրվածություն էր առաջացնում, գրավում մարդկանց ուշադրությունը: Իմիջիայլոց, մինչ օրս Քլիբաձեն ընկերություն է անում Երևանի «Արարատի» ֆուտբոլիստներ էրոարդ Մարկարովի, Արկադի Անդրեասյանի, Խորեն Չովհաննիսյանի հետ:

Վերջերս Դավիթ Քլիբաձեն հրատարակեց նկարագրող մի գիրք, որտեղ իմի են բերվել նրա ժուռնալիստիկական բազմամյա գործունեության արդյունքները: Գրքի հեղինակը հիանալիորեն ներկայացրել է մեծ ֆուտբոլիստների լեգենդար Բորիս Պայճաձեին, Ալեքսանդր Դոլգոբրոձեին, Միխեիլ Մեսխիին, Սլավա Մետրեբելուն... Ոչ պակաս պայծառ էջեր են նվիրվել Քուբայիսի «Տորպեդոյին» և այլ թիմի «Դինամո» հրավիրված Նոդար Սիսկիանին, ֆուտբոլիստներ Ռամազ Շենգելային, Թենգիզ Սուլաբլեյիձեին... Գրքում առաջին տեղ է հատկացվել Սուխումի «Դինամոյից» մեծ ֆուտբոլի ճանապարհին ընտրած Նիկիտա Սիմոնյանին, Սարգիս Չովիկյանին...

լիսի «Դինամո», ապա Մոսկվայի «Դինամո» տեղափոխված ճանաչված դարպասապահ Վալտեր Սանտիակոյանի հետ: «Չայերենում Սանտիա ազգանունը հիշեցնում է «Սանա»՝ եւ արտահայտությունը: Թբիլիսցիները հարցականով ասվող ազգանունը «Սանտիա» կատարված պատասխանում էին. «Չէ՛, տո, Մարկանիա» (ժամանակին Թբիլիսիի «Դինամոյի» դարպասապահը):



Դավիթ Քլիբաձեն իր գրքով հերթական անգամ ցույց տվեց, որ ինքը ֆուտբոլի, այդ ամենամասսայական մարզաձեվի նուրբ գիտակ է, որով շատերը չէ, որ կարող են հարուստանալ: Այդ տեսանկյունից հատկանշական է գրքի հեղինակի կողմից ֆուտբոլի նշանավոր մարզիչ Վիկտոր Մալոյի խոսքերի մեջբերումը, որն իր հերթին հենվել է հայ նշանավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի խոսքերի վրա. «Իմ շրջապատում բոլորը գեղարվեստի «գիտակներ» են, որոնք անգամ փորձում են ինձ նկարել սովորեցնել»:

ԱՆԿԵՂԾ ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

Թբիլիսիի գրական միջավայրերի՝ հայ, վրացի, ռուսալեզու ընթերցողների շրջանում, այսօր ճանաչում վայելող, ռուսագիր բանաստեղծուհի, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովայի «Անկեղծ խոսքի ուժը» նորընծա ընտրանին, ինչպես արդեն նշեք ենք նրա հետ ունեցած մեր հարցազրույցում («Վրաստան», 15 օգոստոս, 2015թ.), բանաստեղծուհու ութերորդ էլ իր ծննդյան հոբելյանին նվիրված գիրքն է, որը լույս է տեսել ընթացիկ տարում, Թբիլիսիում:

Նոր ժողովածուն բազմաժանր է, ընդգրկում է հեղինակի վերջին տարիների ստեղծված բանաստեղծությունները, քառյակները, առակները, բալլադները և նախորդ գրքերում հրատարակված որոշ գործեր: Մարինա Կիրակոսյանը այս անգամ եւս, հավատարիմ մնալով բանաստեղծական ուրույն սկզբունքների, բարձրաձայնում է կյանքի ճշմարտությունների մասին, եւ դա անում պոետի խռովքոտ, հուզառատ, մաքուր ուղեշուր գրչով ու ոգով: «Խոր ու բարդ մարդկային զգացմունքների մասին բանաստեղծուհին կարողանում է խոսել պարզ և հասկանալի: Անհուն ու վսեմ այս քնարերգության մեջ այնքան բարություն, մաքրություն, բարոյականություն, հոգի էլ միտք կա, որ նրան միշտ դիմարտությունների մասին, եւ դա անում պոետի խռովքոտ, հուզառատ, մաքուր ուղեշուր գրչով ու ոգով:

մուն եւ այն պահերին, երբ ուզում ես սուզվել հոգեւոր շռայլ աշխարհի առողջացնող ու դարմանող ալիքներում»,- սա փիլիսոփայական գիտությունների դոկտոր, գրքի առաջաբանի հեղինակ Մելիտոն Գեիշվիլու անկեղծ գնահատականն է... Ընտրանի գրքի հեղինակների մոտ գրքերի լույսընծայումը՝ նրանց հետ նորանոր հանդիպումների հույսերով: ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՆՅԱՆ



ԻՐԱՎԱԿԱՆ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

Երբ գրանցման համար մուտք է գործում կոոպերատիվի դիմումը, մենք առաջնորդվում ենք ոչ միայն ձեռնարկային, այլ և գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքով, եւ քաղաքացիներ կայացնելու է լրացուցիչ գյուղատնտեսական կոոպերատիվի վերաբերյալ սահմանված տվյալները: Մասնավորապես, վերոնշյալ կոոպերատիվի գրանցման համար անհրաժեշտ է անվանումը, բաժնետերերի ու կիսմասնակցությունը: Քաղաքացիներին, ովքեր ցանկանում են գրանցել նման կոոպերատիվը, խորհուրդ ենք տալիս մեր կայքէջում ծանոթանալ կանոնադրության նմուշներին, որոնք տրվել են գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության կողմից, դրանք լրացնեն, որպեսզի խուսափեն հնարավոր շեղումներից: Հատկանշական է, որ մեզ մոտ արդեն պատրաստվում են լիարժեք փաստաթղթերը, եւ քաղաքացիների կարգավիճակի ստացման համար գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունից լրացուցիչ տվյալների ներկայացում չի պահանջվում:

- Որքան է իրավաբանական անձանց գրանցման սակագինն ու գրանցման ժամկետը:

- Ցանկացած իրավական տարբերակով գրանցումն իրականացվում է մեկ աշխատանքային օրում, եւ սակագինը կազմում է 100 լարի: Թեպետ գործում է նաեւ արագացված կարգով գրանցումը, որի սակագինը կազմում է 200 լարի:

- Ինչպես հայտնի է, բիզնեսը գրանցել ցանկացողներին գործակալությունը շահագրգռված անձանց առաջարկում է լրացուցիչ սպասարկում: Ինչի՞ մասին է խոսքը:

ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ ԲԻԶՆԵՍԸ

- Լրացուցիչ սպասարկումը նախատեսվում է բանկային հաշվի բացում եւ, որպես բիզնես-օպերատոր, գրանցում:

Բիզնեսի գրանցման դիմումի ներկայացմանը զուգընթաց, շահագրգռված անձինք կարող են անձամբ ընտրել ցանկալի բանկը եւ հաշվի բացման սպասարկումից օգտվել առանց լրացուցիչ գումարի վճարման: Տեղեկատվությունը հաշվի բացման վերաբերյալ բանկն առաքում է ավտոմատ կարգով: Եթե անձը ցանկանում է ստանալ այդ սպասարկումը, ապա անհրաժեշտ է դիմումը լրացնելու ժամանակ մշել նաեւ բջջային հեռախոսահամարը: Ներկայումս բանկային հաշվի բացումը իրականացվում է գրանցման հետ միաժամանակ, եւ այդ երկու սպասարկումները միավորված են մեկ ընթացակարգում: Բանկում հաշվի բացման համար շահագրգռված անձինք բանկ այցելելու անհրաժեշտությունից ազատվում են: Հատկանշական է, որ վերոնշյալ սպասարկումը տնտեսում է բիզնես-սուբյեկտի ժամանակը եւ մի ընթացակարգով երկու սպասարկման ստացման հնարավորություն է ընձեռում:

Ինչ վերաբերում է բիզնես-գործընկերոջ գրանցմանը, ապա հիշեցնենք, որ գործող օրենսդրությամբ, անձին, որը զբաղվում է պարենամթերքի, ամսանակերի, ամսուների, բույսերի, ամսանապահական եւ բուսական մթերքների, ամսանաբուժական դեղորայքի, պետիցիդների, ագրոքոնաքիմիկատների արտադրությամբ, վերանշանամբ, դիստրիբուցիայով, նաեւ ամսանաբուժության եւ բույսերի պաշտպանության ոլորտում սպասարկումների մատուցմամբ, պարտադրվում է անվերապահորեն գրանցվել որպես բիզնես-օպերատոր: Որպես բիզնես-օպերատոր գրանցվելու հարցով շահագրգռված անձը պարտավոր է ստույգ

տեղեկատվություն ներկայացնել իր գործունեության մասին, ուստի, նրանց համար գործընթացի յուրացման նպատակով դիմումը լրացնելու ընթացքում, մենք առաջարկում ենք գործունեության ոլորտների եւ տեսակների մանրամասն բնութագրում:

Որպես բիզնես-օպերատորներ կարող են գրանցվել այն սուբյեկտները, ովքեր գրանցել են իրենց բիզնեսը, սակայն առաջիկայում մտադիր են իրականացնել վերոնշյալ գործունեությունը: Գրանցումը կարող են իրականացնել նաեւ արդեն գրանցված բիզնես-սուբյեկտները: Սպասարկումից օգտվելու համար, անձը պետք է լրացնի դիմումի հավելվածը՝ հատուկ հարցաթղթով: Բիզնես-օպերատոր գրանցվելուց հետո, տվյալներն ավտոմատ կարգով փոխանցվում են պարենամթերքի ազգային գործակալություն: Սպասարկման ժամկետը մեկ աշխատանքային օր է, իսկ սակագինը՝ 10 լարի: Թեպետ, եթե սուբյեկտը բիզնես-օպերատոր է գրանցվում առաջին անգամ, ապա սակագինը չի վճարում:

Բացի այդ, կարելի է գրանցվել նաեւ մեր կայք-էջով: Բիզնեսի գրանցման էլեկտրոնային ծրագրում գործում է ապլիկացիա, որի օգնությամբ շահագրգռված անձինք կարող են ինքնուրույն, իրենց անունով եւ գաղտնագրով մուտք գործել համակարգ եւ, առանց գործակալություն այցելելու, փոխել իր տվյալները: Հատկանշական է, որ պարտալից գրանցման համար սպառողը սկզբում անվան է գաղտնագրի ստացման համար պետք է ներկայանա գործակալություն:

- Բիզնեսի գրանցման համար, ո՞րպես է ներկայանա քաղաքացիները:

- Սպասարկման ստացման համար նրանք կարող են դիմել հանրային ռեեստրի ազգային գործակալության տարածքային ծանայություններին, արդարադատության տնե-

րին, գյուղական տներին եւ հեղինակային ծանայություններին:

- Որքանով է մատչելի քաղաքացիների համար բիզնեսի գրանցման մասին որոշումը:

- Բիզնեսի գրանցման մասին որոշումը ընդունվում է էլեկտրոնային կարգով, եւ այն մատչելի է համացանցում, հանրային ռեեստրի կամ արդարադատության տան պաշտոնական www.reestri.gov.ge; www.psh.ge կայք-էջերում:

Հատկանշական է, որ գրանցման մասին որոշումը էլեկտրոնային տարբերակի հետ միասին ներառում է քաղվածք: Պահանջի դեպքում, քաղվածքը կարելի է ստանալ նաեւ անզերեցով:

- Ինչպես հայտնի է, քաղաքացիները կարող են օգտվել նաեւ էլեկտրոնային քաղվածքի սպասարկմամբ, եւ դա ավելի արագ է արվում:

- Բիզնես-սուբյեկտի վերաբերյալ քաղվածքի նորացումը հնարավոր է անմիջականորեն տանից կամ գրասենյակից, հանրային ռեեստրի պաշտոնական www.reestri.gov.ge կայք-էջի օգնությամբ: Էլեկտրոնային քաղվածքի պատրաստման համար, քաղաքացին պետք է մուտք գործի www.reestri.gov.ge կայք-էջ, ապա մանրամասների բաժնում գտնի քաղվածքը, լրացնի էլեկտրոնային կարգով, բանկային քարտով մուծի սակագինը:

Հատկանշական է, որ, քաղվածքի էլեկտրոնային նորացման դեպքում, սակագինը կազմում է մեկ աշխատանքային օրվա համար, 10 լարի փոխարեն, 15 լարի եւ արագացված կարգով՝ մույն աշխատանքային օրում, 40 լարի փոխարեն՝ 50 լարի: Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային սպասարկումների ուղղությամբ աշխատանքները շարունակվում ենք եւ բիզնես-սեկտորի համար ծրագրում լրացուցիչ սպասարկումներ:

ԾՁ ԾՕ - ձ 2 ի 2 ռ Է 2 Ս 2 ՍԷ 2 1/2 Ս Է ձ ԾՃ ձ Ծ, ՍՕ Ծ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՍՆՍԵԿ ԵՐԵՎՈՒՅԹ, ՈՐ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ՅԵՆՑ ՅԻՍԱ

Կյանքից պետք է հաճույք ստանալ եւ վայելել մեզ տրված ամեն մի վայրկյանը: Այս հարցում հաջողության հասնելու համար պետք է սովորել դրականորեն մտածել եւ դրական էներգիա կուտակել: Իսկ ինչպե՞ս:

րորդ պլան: Մարդիկ ավելի հաճախ մտածում են, թե ինչ կարող էին անել կամ ինչ կլինի հետո՝ մոռանալով, որ մեր կյանքն այն է, ինչ կա մեր շուրջը հենց հիմա:

8. Սահմանիր քո կանոնները

Կարելու է, որ քեզ շրջապատող մարդիկ իմանան, թե քեզ հետ շփման ժամանակ ինչն է թույլատրելի, իսկ ինչը ոչ:

9. Թուլացրու տեմպը

Թուլացիր, փորձիր հաճույք գտնել նույնիսկ ամենափոքր մանրամասներում: Խորը շնչիր եւ վայելիր կյանքիդ ամեն ակնթարթը:

10. Խուսափիր «բունավոր մարդկանցից»

Ժամանակ առ ժամանակ մեր կյանքում հայտնվում են «բունավոր մարդիկ»: Մարդիկ, ում հետ շփվելը բարկացնում, ծանծաղացնում է քեզ: Այս պարագայում պետք է պարզապես ազատվել նրանցից:

11. Կիսվիր քո երջանկությանը

Կիսվիր քո երջանկությանը, օգնիր կարիքավորներին, բարեգործություն արա: Այս ամենը ոչ միայն օգնում է բարձրացնել քո ինքնազգացողությունը, այլև դու զգում ես, որ կարողացել ես ինչ-որ բան փոխել:

ԵՂԻՍԱԲԵԹ ԵՐԿՐՈՐԻՉՆ՝ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ

Հեռուստայությամբ լսեցի, որ Անգլիայի թագուհի Եղիսաբեթ Երկրորդը սեպտեմբերի 9-ին սահմանել է գահակալության տեւողության ռեկորդը. այսօր 63 տարեկան է: Սակայն, որքանով տեղեկացված եմ, եղել են միայակերտ, ովքեր շատ ավելի երկար տարիներ են գահակալել, օրինակ՝ Պարսից Շապուհ Երկրորդը գահակալել է 70 տարի:



Ըստ երեւոյթին, սխալ տեղեկատվություն է հաղորդվել: Մ.Մարտիրոսյան

Ախալքալաքի

Ո՛չ, այստեղ սխալ չի եղել, ուղղակի ձեր ուշադրությունից սպրդել է, որ սեպտեմբերի 9-ին նշվեց Եղիսաբեթ Երկրորդի գահակալման տեւողության ռեկորդը բրիտանացի միակերտների շրջանում: Այդ օրը նրա գահակալման ժամանակը կազմեց 63 տարի եւ 217 օր. մեկ օրով ավելի, քան Վիկտորյա թագուհուն:

հասարակության մեջ: Իր կառավարման 63-ամյա ժամանակաշրջանում Եղիսաբեթ Երկրորդը 256 պաշտոնական այց է կատարել 129 երկիր: Գետաքրքիր է, որ այդ ճամփորդություններից ոչ մեկի ընթացքում թագուհուց անձնագիր չեն պահանջել. այն նա չունի էլ. չէ՞ որ բոլոր անձնագրերը Մեծ Բրիտանիայում նրա անունով են տալիս:

Քչերին է հայտնի, որ թագուհին կարող էր ամուսնանալ դեռ 17 տարեկան հասակում. ընդ որում, դեռահաս գեղեցկուհու ձեռքն ու սիրտը հայցողը ոչ այլ ոք էր, քան Եղիսաբեթի դուքս արքայազն Ֆիլիպը՝ նրա ներկայիս ամուսինը: Սակայն, այն ժամանակ Եղիսաբեթ Երկրորդի ծնողները համարեցին, որ նա պատրաստ չէ ամուսնության, եւ Ֆիլիպի առաջարկությանը համաձայնեցին միայն չորս տարի անց: Իր կառավարման ընթացքում Եղիսաբեթ Երկրորդը 57 մլրդ ֆունտ (87 մլրդ դոլար) է բերել երկրի տնտեսությանը:

ԱՅԴ ԴԱՎԱԴԻՐ ԱԽՈՐԺԱԿԸ



Վերջին ամիսների դաժան շոգերը, հեղձուկիչ աշխատասենյակը եւ անընդհար չհագեցող ծարավը զրկում են ցերեկային ախորժակից: Նույնիսկ ուրախանում եմ «Զեն ուղում, ուրեմն նիհարում եմ»: Սակայն, ինչպես ասում են, երեկոյան տեղը հանում եմ, ուղում եմ չափից ավելի: Զգիպեմ, ինչպե՞ս վարվել:

Թբիլիսի

Ինչ կարող եք անել, օրգանիզմը պահանջում է լրացնել սննդարար նյութերի պակասը: Դժվար է դիմադրել բնության կանչին: Դեռ այստեղ է թաքնված դավադրությունը: Երեկոյան մեր օրգանիզմը հակված է ճարպեր կուտակել իր բոլոր ֆերմենտներով ու հորմոններով: Այն ամենը, ինչ մենք կտանք նրան սննդի տեսքով, նա ջանադրորեն կկուտակի մեր գոտկատեղում: Բարեբախտաբար, իրավիճակն անհուսալի չէ, եթե հետոքեն կարողանաք օգտագործել երեկոյան անհագ ախորժակի դեմ պայքարի միջոցները: Աշխատանքից դուրս գալուց առաջ անպայման մի քիչ կերեք: Կարող եք կաթնաշոռ ուտել, կեֆիր խմել, քաղցր մրգեր կամ մի կտոր հաց ու պանիր ճաշակել:

Տանը, մինչեւ տնային գործերին անցնելը, մի բաժակ կանաչ թեյ խմեք՝ մեղրով կամ քաղցր պտուղներով: Ընթրիքը պատրաստեք «բարի» մթերքներից, որոնք մարսելու ժամանակ ավելի շատ կալորիա է ծախսվում, քան պարունակվում է դրանց մեջ, եթե օգտագործեք թարմ կամ եփած վիճակում: Ահա «բարի» մթերքների ցուցակը. բազուկ, կաղամբի բոլոր տեսակները, մատղաշ կարտոֆիլ, մեխուր, գագար, բադրիչան, վարունգ, լոլիկ, դդում, կանաչի, սոխ, բոլկ, սունկ, ձուկ, հավի կրծքամիս: «Բարի» մթերքների շարքին կարելի է դասել նաեւ կաթնամթերքի բոլոր տեսակները: Դրանք հարուստ են կալցիումով, որն արագացնում է ճարպերի այրումը:

1. Ժպտա

Ամեն անգամ, երբ դու ժպտում ես, օրգանիզմում արտադրվում է էնդորֆին հորմոնը, որը ոչ միայն բարձրացնում է քո տրամադրությունը, այլև՝ բարելավում նյարդային համակարգի աշխատանքը: Ուստի, ժպտա:

2. Ծիծաղիր

Ծիծաղն ու հումորի զգացումը բուժիչ հատկություն ունեն եւ կարող են փոխել անգամ տխուր ու մռայլ օրը:

3. Երախտապարտ եղիր

Մեզանից շատերը մոռանում են շնորհակալություն հայտնել այն ամենի համար, ինչ ունեն: Իսկ երախտապարտ լինելու համար պետք է նկատել ձեր շուրջը առկա լավ ու դրականը եւ շնորհակալություն հայտնել դրա համար:

4. Մաքուր օդ շնչիր

Դուրս արի տանից եւ զնա բնության գրկում թարմ օդ շնչելու: Սա սթրեսից ազատվելու լավագույն միջոցն է: Փոքր-ինչ հանգստացիր, դու դրա կարիքն իսկապես ունես:

5. Տրվիր քո զգացումներին



Լսիր եւ տրվիր քո զգացումներին. չէ՞ որ դրանք ինչ-որ պատճառներով են ծնվել քո հոգում: Պետք է հաշվի առնել դրանք:

6. Մեր պարզեցիր քեզ

Երբեմն երջանիկ լինելու համար պետք է պարզապես սիրել սեփական անձը: Զեզանից առավել ո՞վ ունի ձեր սիրո կարիքը: Գնա սրահ, փոխիր սանրվածքը, նոր հետաքրքրություն գտիր քեզ համար, հաճույք պատճառիր ինքդ քեզ:

7. Ապրիր ներկայով

Կյանքը վայելելու լավագույն ժամանակը ներկան է: Պետք չէ ապրել անցյալով կամ ապագայով. դրանք պետք է թողնել երկ-

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԶՐՈՒՅԵԼՈՒ ԱՐՎԵՍ



Մի փորձեք անդադար խոսել: Այդպես դուք չեք կարողանա լսել դիմացինին եւ նրան արտահայտվելու հնարավորություն չեք տա: Գիշեք հին ասացվածքը. «Աստված մարդուն երկու ականջ է տվել եւ միայն մեկ բերան»:

րեք այն ժամանակ, երբ զրուցում եք: Դա շատ է խանգարում եւ ցույց է տալիս, որ զրուցակցի խոսքերը ձեզ չեն հետաքրքրում: Միշտ ուղիղ պատասխան տվեք: Ուղիղ հարցին տված անորոշ պատասխանը մարդկանց հուճից հանում է: Խորհուրդ հարցրեք եւ խնդրեք օգնել: Դա դրական փոխհարաբերությունների հաստատման միջոցներից մեկն է: Մարդկանց դուր է գալիս իրենց գիտելիքներն ու ընդունակություններն ի ցույց դնելը, եւ նրանց հաճելի կլինի ձեր խնդրանքը կատարել:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏԵՐ

Ապստամբ ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել: ԳԱՐԵԳՆԻ ՆՏՊԵՅ (1888-1955) Գայ գորավար Զեն բաժանում լավը վատից, գի պակաս է ուսումը իմ... ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ (1705-1791) Վրաց բանաստեղծ Կամայականությունը պետք է մարել ավելի շուտ, քան հրդեհը: ԳԻՊՈՂԿՐԱՏ (մ.թ.ա. 460-մ.թ.ա. 356) Գնադարյան հույն բժիշկ Մարդուց սուր քննադատություն մի սպասեք, մինչեւ նրան չբարկացնեք. դաժան ճշմարտությունը միշտ լավում է անողը:

ԳԻՆՐԻ ԹՈՐՈ (1817-1862) Ամերիկացի գրող Կյանքի իմաստի համառոտ ձեւակերպումը կարող է այսպիսին լինել. աշխարհը շարժվում է ու կատարելագործվում: Գլխավոր խնդիրն այդ շարժման մեջ մերթուրում ունենալն է, դրան ենթարկվելը եւ դրա հետ համագործակցելը: ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ (1828-1910) Ռուս գրող Մեր կյանքը ճամփորդություն է, որը գաղափարական ուղեցույցով է առաջնորդվում: Եթե ուղե-

ցույց չկա, ամեն ինչ կանգ է առնում: Նպատակը վերանում է եւ ապրելու ուժն անհետ կորչում: ՎԻԿՏՈՐ ԳՅՈՒ (1802-1885) Ֆրանսիացի գրող Գարգելի կանայք, եթե տղամարդը ուտում է եւ միշտ բազմոցին պառկած հեռուստացույց նայում, ուրեմն նա ձեր կողքին լավ է գզում: Ընդհակառակը այդպիսի կանանց: Լսո՞ւմ ես, իմ սիրելի տիկին: Գ. Բ. «Վրաստանի» ընթերցող



2 ՍՕ Ի 2 ռ Է 2 Ս 2 ՍԷ 2 1/2 Ս Է ձ ԾՃ ձ Ծ, ՍՕ Ծ - Շատ կեղտոտ կին է: Ամեն օր լողանում է: * Ճապոնիայում գող բռնող ռորոտ են ստեղծել... Ֆրանսիայում նա 50 թույլում բռնեց 50 գող: Անգլիայում նա 50 թույլում բռնեց 100 գող: Հայաստանում 5 թույլում գողացան ռորոտին: * Կապիկը մորը հարցնում է. - Մա՛մ, ինչի՞ եմք մենք այսքան գեշ: Մայրը. - Բա՛լե՛ս, դու դեռ այս ստատուսը կարդացողին չես տեսել: * Ապարանցի երեխան հորը հարցնում է. - Պապա, որ խելոք մնամ, կթողնես չարություն անե՞մ: * Ապարանցի զույգ երեխա է ունենում, անունները դնում է Զան-Զան, որ իրար հետ անվճար խոսեն: * Ապարանցու հարցնում են. - Ինչպե՞ս է ռուսերեն «ծուկ»: Պատասխանում է. - Рыба! - Իսկ «ծկնե՞ր» - Ребята!!! * - Ինչո՞ւ ես ուզում կնոջիցդ բաժանվել, - հարցնում են մեկին:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ



ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՕՏՎԵՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵՎԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 24-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Գյումրիում ներկա է գտնվել Հայ Կաթողիկե «Արքեպիսկոպոսական» Աթոռանիստ եկեղեցու օծման արարողությանը...

Եկեղեցին «Արքեպիսկոպոսական» անվանումը կրում է ի նշան Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների անմար հիշատակի:

Սինոդոսի անդամ եպիսկոպոսներ, ինչպես նաև եկեղեցու կառուցման բարերարները, աշխարհիկ հյուրեր՝ տարբեր երկրներից:

Սոչից եկած ընթերցել է Հռոմի Արքեպիսկոպոսի Գրեգորիոսի Մարտիրոսի Պատրիարքի և Սուրբ Աթոռ Սուրբ Էջմիածնի եպիսկոպոսներից բաղկացած պատվիրակությունը ներկայացրել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնության խոսքը:

ԿՆԵՐԿԱՅԱՅՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՒԳԵՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում ավարտվել են Հայաստանի 2016 թվականի պետությունների նախագծի նախնական տարբերակի քննարկումները:

Սեպտեմբերի 18-ին «ՀՀ 2016թ. պետությունների նախագծի օրենքի նախագծի

տեքստային մասի նախնական տարբերակի վերաբերյալ առաջարկություններ են ներկայաց-

րել ՀՀ նախագահի աշխատակազմի, նախարարությունների, Երեսանի քաղաքապետարանի, կառավարության առընթեր մյուս մարմինների ղեկավարները:

րի հետ 2016 թվականի պետական բյուջեի նախնական տարբերակի քննարկումների արդյունքում, ամբողջական տեսքի է բերվելու փաստաթուղթը և ներկայացվելու է Ազգային ժողով:

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Սեպտեմբերի 22-ին Պեկինում Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանդիպում է ունեցել ՉՃՀ պետական խորհրդի նախագահ (վարչապետ) Լի Քեց Յանի հետ:

Փաստելով, որ վերջին տարիներին երկու երկրների միջև բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունն ակտիվորեն զարգանում է, Հայաստանի և Չինաստանի վարչապետները բարձր են գնահատել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ մարտին կայացած պետական այցը ՉՃՀ, ինչը երկու երկրների բարեկամական հարաբերությունները որակական նոր մակարդակի է բարձրացրել ու նոր թափ հաղորդել հայ-չինական համագործակցության զարգացմանը:

Երկու երկրների վարչապետները կարեւորել են ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկայի, տրանսպորտի, քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության, գիտության, կրթության, մշակույթի, քաղաքականության ոլորտներում հետագա համագործակցության խորացումը, համատեղ կոնկրետ ծրագրերի իրականացումը:

Չինաստանի և Չինաստանի վարչապետները մանրամասն քննարկել են Իրան-Հայաստան երկաթուղու, Զյուլիս-Հարավ ճանապարհի վերաբերյալ Հինաստանի վարչապետին հրավիրել է պաշտոնական այց կատարել Հայաստան. իրավերը սիրով ընդունվել է:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Ե ՀԱՊԿ-Ի ԵՎ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ



Հայաստանը մեծ դերակատարություն է ունեցել Հավաքական անվտանգության պարմանագրի կազմակերպության ռազմական բաղադրիչի ձևավորման մեջ: Այդ մասին Առաջնորդության ղարկի ռուսաճողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

կազմակերպության շրջանակներում խաղաղապահ ուժերի որակի բարձրացումը: «ՀԱՊԿ-ի շրջանակներում մեր խաղաղապահ ուժերը օրինակելի են, նույնիսկ այն պայմաններում,

երբ բոլորը գիտեն, որ մեր խաղաղապահ ուժերի պատրաստման գործում մեզ աջակցում է նաև ԱՄՆ-ը», - ընդգծեց Օհանյանը՝ շեշտելով, որ Հայաստանն ազատ համագործակցում է Հավաքական անվտանգության պարմանագրի կազմակերպության և ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Չինաստանի վարչապետին հրավիրել է պաշտոնական այց կատարել Հայաստան. իրավերը սիրով ընդունվել է:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Ե ԸՆԴՈՒՆԵԼ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՄԵՃԱԾ ՀԱՅԵՐԻՆ

Հայաստանը պատրաստ է ընդունել Սիրիայում մնացած բոլոր հայերին, եթե նման անհրաժեշտություն առաջանա: Այս մասին պայտարարեց Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ ավելացնելով, որ, այս պահի դրությամբ, Սիրիայում 15-17 հազար հայ կա:

«Եթե նրանք որոշեն Հայաստան գալ, մեր պետությունը, միջազգային կառույցների, հայկական տարբեր կազմակերպությունների հետ համատեղ ջանքերի արդյունքում, պետք է ամեն ինչ անի նրանց տեղավորելու համար: Բնականաբար, մենք չենք կարող հիմա նրանց բնակարաններ

րով ապահովել, սակայն կարող ենք գտնել վարձով բնակարաններ, կարգավորել նաև տան վարձի խնդիրը, որպեսզի մարդիկ կարողանան դուրս գալ այդ կրակի օղակից», - ընդգծեց նախարարը:

Սիրիահայ: Նա նշեց, որ այս պահին Հայաստանում 17 հազար սիրիահայ է բնակություն հաստատել:



ԱՃԵԼ Ե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2015 թվականի հունվար-օգոստոսին 3,9 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

առևտրի շրջանառության, արտաքին առևտրաշրջանառության ոլորտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 0,2 տոկոսով աճել է շինարարության ծավալը: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը եւս աճ է գրանցել 3,5 տոկոսով: 2014թ. հունվար-օգոստոսի համեմատ, ընթացիկ տարում ծառայություն-

ների ծավալը (առանց առևտրի) աճել է 2,2 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը երկու տոկոսով: Առևտրի շրջանառությունը նվազել է 5,4 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի ծավալը 4,4 տոկոսով աճել է 2014թ. հունվար-օգոստոսի համեմատ:

Սպառողական գների ինդեքսն աճել է 4,8 տոկոսով: Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10,3 տոկոսով: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները, 2014թ. հունվար-օգոստոսի համեմատ, նվազել են 19,5 տոկոսով, ընդ որում՝ արտահանումն ավելացել է 0,5 տոկոսով, իսկ ներմուծումը նվազել է 26,3 տոկոսով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով, անկում են գրանցել

ԸՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀՐԱՊԱՍՐԻ ԽՍԽՏՄԱՆ ՀԵՏ ԱՌԵՉՎՈՂ ՀԱՐՅԵՐԸ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Նյու Յորքում հանդիպել են Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ և գրույել իրադարձարի ռեժիմի խախտման վերջին դեպքի վերաբերյալ, մասնավորապես, քաղաքացիական անջանց մահվան դեպքերի առնչությամբ: Հակառակորդի կրակոցներից Տավուշի մարզի Բերդավան համայնքում սեպտեմբերի 24-ին զոհվել է 2 քաղաքացիական անջ, 2-ը՝ վիրավորվել: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Տավուշի մեկ այլ սահմանամերձ՝ Պառավաբար համայնքում հակառակորդի կրակոցից զոհվել է 83-ամյա Պայծառ Աղաջանյանը:

ՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՑԻՄ՝ ՆԱԲՐԱՍՏ ՕՏԵԼՅԱ ՀԱՄԱՐՈՒՄՅԱՆԻՆ

Ճանաչված երգչուհի Օֆելյա Համբարձումյանին նորովի կարելի է բացահայտել նոր կինոնկարի միջոցով, որը հայ երգի թագուհին չափ է հավանել: Հայաստանի առաջին փիլիսոփա Սարգսյանը, Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, բազմաթիվ արվեստասերներ ու երգչուհու փառանքը գնահատողներ սեպտեմբերի 24-ին «Մոսկվա» կինոթատրոնում մասնակցեցին «Օֆելյա» ֆիլմի պրեմիերային:



Երգչուհու խոսքով, ֆիլմի 55 րոպեներում հնարավոր չի եղել փեղավորել այն հազարավոր երգերը, որ ինքն է չայնագրել: «Տեղավորվել է 7 երգ: Երգեր, որոնք 50-60 տարի էլանին են, սիրված ու գնահատված», - հայտնեց Օֆելյա Համբարձումյանը: Ֆիլմի ռեժիսորը Հայկ Վարդանյանն է: Ֆիլմը ներկայացվելու է սփյուռքի փարբեր գաղթօջախներում, ինչպես նաև ցանկություն կա այն տանել Հայաստանի մարզեր ու Արցախ:

ԼԵՎՈՆ ՍԵՆՆՅԱՆԻ ՍԵՎԱՆ ԳՐՈՒՄԵՐԻ ԳՈՒՐԱԿ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին բայվեյ Հայաստանի գրողների միության նախկին նախագահ, երջանկահիշատակ Լեւոն Անանյանի անվան Գրողների պուրակը: Այգին հիմնադրվել է 2013 թվականի ապրիլի 16-21-ին Երեւանում անկապված միջազգային պոեզիայի առաջին փառատոնի մասնակիցների կողմից, որոնք սրկել են իրենց պետությունը խորհրդանշող ծառեր: Պուրակի ընդհանուր մակերեսը կազմում է 1010 քառակուսի մետր, այն վերակառուցվել է «Օպերա Սոլիթ» հյուրանոցի կողմից: Պուրակում փեղավորված են հայ մեծանուն գրողներ Պարույր Սեւակի, Վահան Տերյանի և Ավետիս Իսահակյանի հուշարխարակները: Բակի կենտրոնական մասում գտնվում է հանգստի գոտին, որը հարմարեցված է հատուկ օրերին միջոցառումներ կազմակերպելու համար:

ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ ԶՈՒՅԱԶՆԵՐԵՄ՝ ՀՈՎԶԱՆԵՆՍ ԵՐԲԱՅԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Գյումրիի Հովհաննես Շիրազի հուշարունթանգարանում սեպտեմբերի 21-ին բայվեյ «Հեղադարձ հայացք» 100 տարի անց» խորագիրը կրող ցուցադրությունը, որին ներկայացված էին հայ միջնադարյան հուշարձանների լուսանկարներ՝ ավերված Հայոց ցեղասպանության փարիներին և հաջորդող ժամանակաշրջանում: Հռոմոսի վանք, Անիի Սուրբ Փրկիչ եկեղեցի, Բագրայրի, Խժկոնքի վանքեր, Տեկուրի փառար, Բագրեւանդի Սուրբ Հովհաննես եկեղեցի, Մշո Սուրբ Կարապետի վանք և այլն, սրանք ճարտարապետական հարստություններ են, որոնք սպեղծել է հայ փարիներ առաջ, սակայն այս ժառանգության մեծ մասի մասին մենք այսօր կարող ենք իմանալ միայն լուսանկարների միջոցով: Ցուցահանդեսը կազմակերպվել էր թանգարանի և Հայաստանի պարմամշակութային արգելոց-թանգարանների ու պարմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության համարող ուժերով:

